ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ՄԱՀԸ·

Մահուան մի բօթ սարսեցրեց հարիւր միլիօնաւոր հպատակ ժողովրդի սիրտը· կայծակի արագութեամբ և սարսափով տարածուեց Պետութեան բոլոր անկիւնները մի գոյժ՝ թէ այլ ևս չկայ խաղաղասէր Կայսրը։

Հայ ազգը՝ Հայաստանեայց Ս· Եկեղեցու լրմամբ՝ քրիստոնէական ճշմարիտ խաղաղութեան տենչալով, տեսնում էր խաղաղութեան դափնին մեծ Կայսեր ձեռքում բարձրացրած, լսեց ճնշող հիւանդութեան լուրը թէ չէ, սկսաւ սրտագին աղօթքներ վերառաքել առ Տէրն կենաց, որ զթայ և աղատէ խաղաղութեան զինուորին մահուան մահճից։ Սակայն արդէն ուշ էր· հիւանդութիւնը ճանապարհ էր հարթել դէպի միւս կեանք։ Եւ ահա ամսոյ 20-ին հեռագրական արագընթաց լուրը հասաւ և Հայաստանեայց Ս· Եկեղեցու փարախը՝ թէ հզօր ԿԱՅՍՐՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ՏՈՒԱՒ ԻՒՐ ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ։

Հանգուցեալ Աղեքսանդր Գ· Կայսրը յայտնի եղաւ ամբողջ Եւրոպային Իւր մեծանշանակ խաղաղութեամբ։ 14 երկար տարիների թագաւորութիւնը պսակուեց խաղաղասիրութեան փայլուն դափնիով։ Մինչդեռ ամեն տարի, գրեթէ ամեն օր սպասում էր Եւրոպան թէ հա երկինք կբարձրանայ պատերազմի սոսկալի գոչիւնն և արեան չտեսնուած հեղեղներով կոռոգուի մարդկութեան յառաջադիմութեան երկար դարերի մշակութիւնը, յաղթանակ պարգևելով բարբարոսութեան, բոլորը դարձեալ իւրեանց ակնկառոյց հայեացքները ուղղում էին դէպի Ռուսաց հզօր Կայսրն, որ զօրաւոր ձեռքով պինդ պահում էր խաղաղութեան կառքի սանձերը։

Այս խաղաղութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ Եւրոպայի յառաջադիմութեան համար· նոյն իսկ Ռուսաց կառավարութիւնն ամեն ջանք գործ դրեց Պետութեան բարւոքման և բարգաւաճման համար, որի պրտուղները կվայելէ ժողովուրդն ապագայում ևս։ Ուստի և լիաշուրթն կդոչենք միշտ աղօթքների մէջ· Հանգիստ ոսկերացդ, խաղաղութեան և ժողովրդի բարօրութեան զօրաւոր Պաշտպան։

Ազգիս Վեհափառ Հայրապետը խոր թախծութեամբ վշտացած լինելով այդ տխրալի լուրերից, երկու անգամ անձամբ իջաւ Ս. Էջմիածնի Մայր Տաճարն, և սրտեռանդն աղօթեց միաբանութեան հետ Վեհափառ Կայսեր առողջութեան համար։ Թախծութեամբ առաւել ևս համակուեց Նորին Մեծութեան մահուան գոյժով և նոյն օրը անձամբ Վեհափառ Հայրապետը հոգեհանգիստ կատարեց։ Այս միջոցին Վեհափառ Կաթուղիկոսը սրտանց վշտակից լինելով նաև Կայսերական ընտանեաց, շտապեց Իւր մխիթարիչ ձայնը հասցնել Նոցին Մեծութեանց։ Հաւասիկ այդ հեռագրներն և նոցա պատասխանները։

—

(Վեհափառ Կաթուղիկոսի հեռագիրը)

ԻԼԻՎԱԳԻՒ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍՐՈՒՀՒՈՅ։

Զգացմամբ ամենախորին վշտի իրապէպ եղեալ հիւանդութեան Թագաւոր Կայսեր, այսօր զկնի հանդիսաւոր պատարագի ի ծունր իջեալ հանդերձ համօրէն միաբանական ուխտիս Ս. Էջմիածնի, մատուցաք մաղթանս փառաբանականս առ Ամենակալն Երկնաւոր, զի Նա պարգևեսցէ զառողջութիւն Կայսեր մերոյ սիրեցելոյ՝ յուրախութիւն Ձերդ Մեծութեան, Թագաժառանգ Ցեղարեվիչին և համօրէն Օգոստափառ գերդաստանին, և ի բարօրութիւն և ի բարեբախտութիւն համայն Կայսրութեան։

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

—

(Բարձրագոյն պատասխան)

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Խնդրեմ ի Վեհափառութենէ Ձերմէ՝ ընդունել զանկեղծ շնորհակալս Իմ վասն արտայայտեալ բարեմաղթութեանց Ձերոց յաղագս բժշկութեան Թագաւոր Կայսեր։ Մի թողուք զՄեզ առանց աղօթից Ձերոց։

ՄԱՐԻԱ։

—

Երբ անագորոյն մահուան բօթը Կառավարչապետ գեներալ Ադիւտանդ Շերեմետյեվից ստացաւ, Նորին Վեհափառութիւնը խոր վշտացած ուղարկեց հետևեալ մխիթարական հեռագիրները՝ ամբողջ միաբանական ուխտի հետ Մայր Տաճարում հոգեհանգիստ կատարելուց յետոյ։

—

Ի ԼԻՎԱԴԻԱ

ԱՌ ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ։

Տեառն Ամենակալի հաճոյ եղև սահմանել անհասանելի տնօրինութեամբն Իւրով այլապէս, քան Մեք ապաչէաք զՆա։ Ի խոր տխրութիւն համակեաց զԴս և զհամօրէն միաբանութիւնն Մայր Էջմածնայ բօթն մահուան Թագաւոր Կայսեր Ալեքսանդր Գ-ի։ Այնուհանդերձ համայն

Ռուսիա ողբայ դառնապէս զամենամեծ կորուստն իւր։ Կատարելով զՀոգեհանգիստ առաջի սեղանոյ Միածնաիջի, վերառաքեցաք աղօթս ջերմեռանդս առ Ամենաբարձրեալն, զի Նա թեթեւացուսցէ Հոգւոյն Սրբոյ զվիշտ Ձերդ Մեծութեան և հանգուսցէ խաղաղութեամբ զՀոգի Հօրն ժողովրդեան թագաւորին Մեծի։

ՄԿՐՏԻՉ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ի ԼԻՎԱԴԻԱ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈԼԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎՉԻՆ

Վշտագին բօթն մահուան թագաւոր Կայսեր Աղեքսանդր Գ-ի, խմաստուն ծնողին Ձերդ Մեծութեան՝ համակեաց զԴս և զհամօրէն Եկեղեցին Հայկական անսահման թախծութեամբ։ Դառնապէս ողբամք զամենամեծ կորուստն Պետութեանն Ռուսաց ընդ հարիւրաւոր միլիոնաւոր հաւատարիմ հպատակաց։ Խոնարհեալ առաջի անփոփոխելի նախասահմանութեան Ամենաբարձրելոյն և առաջի սեղանոյն Միածնաիջի՝ ի նախաթոռ հին սրբավայրին աղգիս Հայկազնեան՝ կատարեալ զՀոգեհանգիստ վասն ի Տէր հանգուցեալ թագաւոր Կայսեր, վերառաքեցաք զամենաջերմեռանդն աղօթս առ Բարձրեալն ամենեցուն, զի պարգևեսցէ Մեծութեան Ձերում զմխիթարութիւն Հոգւոյն Սրբոյ և թեթեւացուսցէ զմեծ վիշտն Ձեր։ Ամենաբարին հանգուսցէ խաղաղութեամբ զՀոգի ամենաբարեպաշտ Կայսեր Աղեքսանդր Գ-ի՝ շնորհելով զկեանս յաւիտենականս յերկնաւոր սրբայութեանն։

ՄԿՐՏԻՉ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

(Բարձրագոյն պատասխան)

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Վշտաբեր Եկեղեցւոյն Հայկական խորազգաց լեալ, զորմէ յայտ տարարիք Ինձ յառիթ մահուան անմոռանալի ծնողիս, խոնարհիմ հեզութեամբ առաջի անփոփոխելի նախասահմանութեան Ամենաբարձրելոյն։

ՆԻԿՈԼԱՅ։

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Թագուհի Կայսրուհին յանձն արար ինձ՝ յայտնել Ձեզ սրտեռանդն շնորհակալիս յաղագս աղօթից Ձերոց մատուցելոց վասն հանգստեան հոգւոյ ի Տէր հանգուցեալ թագաւորի։

Նախարար Կայսերական դրան
ԿՈՄՍ ՎԱՐԱՆՑՈՎ—ԴԱՇԿՈՎ։

Սակայն Ամենաբարին Աստուած բոլորովին անմխիթար չէ թողնում իւր սիրելի ժո-վրդին. մինչդեռ մի կողմից զրկեց միլիօնաւոր հպատակներին իւրեանց սիրելի Կայսրից և [...]րին տխրութեան մէջ ձգեց, միւս կողմից վերստին օգնութեան հասաւ և հանեց այդ ծ[...] տխրութիւնից, տալով նորան հանգուցեալ հզօր Կայսեր արժանաւոր ժառանգորդ: Տէրու-թեան ձայնին հետևեց ուրախութեան ձայն, որ ահա ԳԱՀ ԲԱՐՁՐԱՑԱՒ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐ-ԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ **ՆԻԿՈԼԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎԻՉԸ**:

Այգիս Վեհափառ Հայրապետը ամսիս 22-ին իջնելով Մայր Տաճարը, Միածնաէջի Ս. Ս-ղանի առաջ ամբողջ միաբանութեան հետ միասին փառաբանական մաղթանք կատարեց, ա-ղաչելով Աստուծոյ, որ տայ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ երկար կեանք և յաղթական գործունէու-թիւն ի բարօրութիւն և ի բարեբաստութիւն համայն ժողովրդեան, որպէս զի և Հայաստա-նեայց Ս. Եկեղեցին, որ իւր ամբողջ ռուսահպատակ ժողովրդով մասնակից է այդ սրտառուչ մաղթանաց, կարողանայ քրիստոնէական անարատ և անբիծ վայելչութեամբ յառաջադիմել, բարեզարդուել ու բարգաւաճել՝ Քրիստոսի աստուածային Ս. Աւետարանի նպատակը ժողո-վրդի մէջ իրականացնելու համար: Նորին Վեհափառութիւնը այս երկնատուր բարեբախտու-թեամբ զգացուած, առաքեց ջերմեռանդ մաղթանքից յետոյ հետևեալ շնորհաւորական և օրհնաբանական հեռագիրը Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր ՆԻԿՈԼԱՅ ԱՂԵՔՍԱՆԴ-ՐՈՎՉԻՆ:

—

Ի ԼԻՎԱԴԻԱ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ՆԻԿՈԼԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎՉԻՆ

Ամենահաւատարիմ զգացմամբք լցեալք առ Կայսերական Ինքնակալ Գահոյն հանուր Ռուսիոյ, ընդ Որոյ հովանաւորութեամբ յառաջադիմէ Եկեղեցիս Հայկական, համարիմ զիմ սրբազան պարտիս սփռել առ Գահոյիւք Ձերդ Կայսերական Մեծութեան զօրհնաբանական՝ շնորհա-ւորութիւնս յաղագս Գահակալութեան Ձերոյ և մաղթեմք, զի Թագա-ւորն Երկնաւոր պարգևեսցէ Ձերդ Մեծութեան զերկարակեցութիւն և զբարօրութիւն և զօրացուսցէ Ամենակարող Հօգւովն Իւրով զԳեռու-թիւնն Ռուսաց ի բարեբախտութիւն միլիօնաւոր հաւատարիմ հպատա-կաց համայն Ռուսիոյ:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

—

(Բարձրագոյն պատասխան)

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Հոգի շնորհակալ եմ յաղագս բարեմաղթութեանց Ինձ արտա-յայտելոց. յանձն առնեմք զՄեզ աղօթից Ձերոց:

ՆԻԿՈԼԱՅ: